Primacy of the Armenian Apostolic Orthodox Church
of the United Kingdom and Republic of Ireland
His Grace Bishop Hovakim Manukyan, Primate

Saint Yeghiche Armenian Church Parish
Սբ Եղիշէ Հայոց Եկեղեցւոյ Ծուխ
Priest in Charge Rev Fr Nshan Alaverdyan
13b Cranley Gardens, Kensington London, SW7 3BB
Registered Charity No 1173403
Pastoral office t. +44 (0)20 7373 8133 email. info@styeghiche.org.uk
www.styeghiche.org.uk https://www.facebook.com/StYeghiche

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԹԵՐԹԻԿ - SUNDAY BULLETIN

1: Today's Scripture Reading, 01st January 2023 Bulletin 01/2023

Զ. կիր. Յիսնակի: Կաղանդ, Տարեմուտ

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԿՈՂՄԷ ԵԲՐԱՅԵՑԻՆԵՐԻՆ ԳՐՈՒԱԾ ՆԱՄԱԿԷՆ 13:18-25;

Աղօթեցէ՛ք մեզի համար, որովհետեւ համոզուած ենք թէ ունինք բարի խղճմտանք ու կ'ուզենք ամէն բանի մէջ վարուիլ պարկեշտութեամբ: Բայց առաւելապէս կ'աղաչե՛մ որ ընէք ատիկա, որպէսզի աւելի՛ շուտ վերադարձուիմ ձեզի: Խաղաղութեան Աստուածը, որ մեռելներէն վեր հանեց մեր Տէրը՝ Յիսուսը - ոչխարներուն մեծ Հովիւը՝ յաւիտենական ուխտին արիւնով -, ամէն բարի գործի մէջ հաստատէ ձեզ՝ իր կամքը գործադրելու, ձեր մէջ իրագործելով իր առջեւ հաճելի եղածը՝ Յիսուս Քրիստոսի միջոցով, որուն փա՛ռք դարէ դար՝: Ամէն:

Կ'աղաչե՛մ ձեզի, եղբայրնե՛ր, որ հանդուրժէք այս յորդորական խօսքիս, որովհետեւ համառօտաբար գրեցի ձեզի: Գիտցէ՛ք թէ մեր եղբայրը՝ Տիմոթէոս արձակուած է. եթէ շուտով գայ՝ անոր հետ պիտի տեսնեմ ձեզ:

Բարեւեցէ՛ք բոլոր ձեզ կառավարողներն ու բոլոր սուրբերը. կը բարեւեն ձեզ անոնք՝ որ Իտալիայէն են: Շնորհքը ձեր բոլորին հետ: Ամէն:

Բարեւեցէ՛ք բոլոր ձեզ կառավարողներն ու բոլոր սուրբերը. կը բարեւեն ձեզ անոնք՝ որ Իտալիայէն են: Շնորհքը ձեր բոլորին հետ: Ամէն:

The Epistle of St Paul to the Hebrews 13:18-25;

Pray to God for us. We are sure in our minds that we have done nothing wrong. We always want to do only what is right. The most important thing is this: Pray that I may come back to you soon.

I pray that God will help you. He is the one who gives us peace in our minds. He caused our Lord Jesus Christ to become alive again after death. God forgives us because of the blood of Jesus' death on the cross. That is God's new agreement with his people that will be true for ever. Jesus is our great Shepherd. He takes care of us like his sheep. I pray that God will give you every good thing that you need to serve him. Then you can do everything that he wants. I pray that God will help us to serve him in a way that will make him happy. He will do that because we belong to Jesus Christ. Jesus is very great, and we should praise him always and for ever! Amen. This is true.

My Christian friends, please listen patiently to my message. This is only a short letter and I want to help you to be strong. I want to tell you about Timothy, who is like a brother to us. They have let him go out of prison, so that he is free now. If he arrives here soon, he will come with me when I travel to see you.

Say 'hello' on my behalf to your leaders and to all God's people. The Christians who have come here from Italy say 'hello' to you too. I pray that God will be very kind to all of you.

Our Aim;
St Yeghiche Armenian Church aims to be the church for the whole community; a place where those who have faith and those who yet to find it or renew it, can come together as a family of God's children; a place where all will be received with tolerance, understanding and friendship.

2: A short interpretation of the Scripture reading

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ 22:24-30

Վէճ մըն ալ եղաւ անոնց մէջ, թէ իրենցմէ ո՛վ պիտի համարուի մեծագոյնը: Ան ալ ըսաւ անոնց. «Հեթանոսներուն թագաւորնե՛րը կը տիրեն իրենց, եւ անոնք որ կ՚իշխեն իրենց վրայ՝ բարերար կը կոչուին: Բայց դուք այնպէս պէտք չէ ըլլաք. հապա ա՛ն որ ձեր մէջ մեծագոյնն է՝ կրտսերին պէս թող ըլլայ, ու հրամայողը՝ սպասարկուին պէս:
Քանի որ ո՞վ է մեծը, սեղան նստո՞ղը՝ թէ սպասարկուն: Միթէ սեղան նստողը չէ՞. սակայն ես ձեր մէջ սպասարկուի մը պէս եմ:

Եւ դուք անոնք էք՝ որ միշտ ինծի հետ կը մնայիք փորձութիւններուս մէջ. ես ալ թագաւորութիւն մը կը կտակեմ ձեզի, ինչպէս իմ Հայրս թագաւորութիւն մը կտակեց ինծի. որպէսզի դուք ուտէք ու խմէք իմ սեղանէս՝ իմ թագաւորութեանս մէջ, եւ բազմիք գահերու վրայ՝ դատելու Իսրայէլի տասներկու տոհմերը»:

The Holy Gospel of Jesus Christ according to Luke 22:24-30

Jesus tells who is most important

Then the apostles began to argue among themselves. They were arguing about which of them seemed to be the most important. Jesus said to them, ‘Kings of other countries use great authority over their people. Leaders of those countries want people to say good things about them. You must not be like that. The most important person among you must become like the least important person. The person who is your leader must become like your servant. Tell me, which person is the more important one? Is it the person who sits at the table to eat? Or is it the servant that puts out the meal for him? Yes, it is the person who sits at the table. But I am here to be your servant.

You have never left me. You have been by my side when trouble came to me. So now I tell you that you will rule with me. My Father has said that I will rule with him in his kingdom. I also say to you that you will rule with me. In my kingdom you will sit at my table. You will eat and drink with me. You will sit like kings on rulers' chairs. You will judge the people of the 12 families of Israel.’

Սուրբ Ծննդյան պահք (Դեկտեմբերի 30, 2022թ.-ից հունվարի 5, 2023թ.)

Ըստ Հայ եկեղեցու՝ Ս. Ծննդյանը նախորդող մեկ շաբաթը պահոց շրջան է: Դեկտեմբերի 30-ից մինչև հունվարի 5-ի երեկո մարդիկ պահք են պահում: Այդ ընթացքում օգտագործվում է բացառապես բուսական ծագում ունեցող սնունդ:

Հայոց հին տոմարի համաձայն՝ Նոր տարին նշվում էր Նավասարդի 1-ին, այսինքն օգոստոսի 11-ին, որը չէր համընկնում պահքին: Հետագայում՝ տոմարական նոր հաշվարկի ներմուծմամբ, Նոր տարին սկսեցին տոնել դեկտեմբերի 31-ին, որը համընկնում էր քրիստոնեական մեծագույն տոնի՝ Ս. Ծննդյան նախընթաց պահքին: Պահեցողները պահոց շրջանից դուրս են գալիս հունվարի 5-ի երեկոյան, երբ եկեղեցում մատուցվում է Ս. Ծննդյան Ճրագալույցի Ս. Պատարագ և տրվում է Ս. Ծննդյան ավետիսը: Մարդիկ միմյանց ողջունում են «Քրիստոս Ծնվեց և Հայտնվեց, մեզ և ձեզ Սուրբ ավետիս»:

Christmas Lent

According to the Armenian Church tradition, the week prior to Christmas is period of Lent. From December 30th till the evening of January 5th people are fasting. In the meantime, the faithful people use vegan dishes.

According to the old calendar, the New Year was celebrated on Navasard 1, which is on August 11 and it did not coincide with Lent. Later on, by introducing calculations of a new calendar, they begun to celebrate the New Year on the night of December 31st, which coincides with the Christmas Lent. They break the fasting on the evening of January 5th, during the church service of Christmas Candlelight Divine Liturgy when the good news of Christmas is announced. People greet each other with "Christ is born and revealed to us and to you the good news."

Safeguarding and Health and Safety issues are taken seriously by Saint Yeghiche Armenian Church, copies of the policy document are available for view, for any related issues please report or contact members of the parish council.

Նռնօրհնեք

Ամենայն Հայոց Գարեգին Բ կաթողիկոսի տնօրինությամբ հաստատվել է օրհնության նոր կարգ, որի համաձայն, ամեն Ամանորի գիշեր Հայաստանեայց բոլոր եկեղեցիներում Գոհաբանական մաղթանքի ավարտին պիտի կատարվի նռնօրհնեքի արարողություն:

Հայկական ավանդության մեջ նուռը՝ իբրեւ ազգային խորհրդանիշ, կրում է կեանքի, ծաղկունքի եւ առատության իմաստ:

Քրիստոնեական խորհրդաբանության մեջ նուռը խորհրդապատկերն է Հիսուս Քրիստոսի հեղած արյան՝ խորհրդանշելով նաեւ Տիրոջ հրաշափառ Հարութունն ու Աստծու շնորհների բազմազանութունը: Հայոց եկեղեցու վարդապետների եւ հայրերի մեկնութունների մեջ նուռը ներկայացվում է նաեւ այն խորհրդաբանությամբ, որ նռան հատիկների պես եկեղեցու անդամները շատ ու բազմատեսակ են, սակայն պատված են նռան նման պինդ կեղեւով՝ միավորված լինելով մէկ եկեղեցու մեջ: Այս պատճառով նռան խորհրդաբանությունը լայնորեն օգտագործուած է հայկական եկեղեցական ճարտարապետության, արվեստի եւ մանրանկարչության մեջ:

Նոր տարվա խորհուրդը

Հետաքրքիր կլինի իմանալ, թե մարդիկ երբվանից սկսեցին **Նոր տարին** կամ **Ամանորը** նշել հունվար ամսին, և ի՞նչպես էին վարվում դրանից առաջ: Սուրբ Գրիգոր Տաթևացին ասում է, որ Նոր տարին սկսեց տոնվել հենց բաբելոնյան աշտարակաշինությունից հետո: 72 ազգերը ցրվեցին ամեն մեկն իր երկիրը, և յուրաքանչյուրը սկսեց տարեմուտ անել այն օրը, երբ մտան իրենց հատկացված աշխարհը: Նույնը տեսնում ենք նաև Աստվածաշնչում: Աստված հրահանգում է հրեաներին, որ Եգիպտոսից դուրս ելնելու ամիսը համարեն առաջին ամիսը: «**Այն թող տարվա առաջին ամիսը լինի**» (Ելք 12.2),- ասում է Աստված: Երբ 72 ազգերից յուրաքանչյուրը հասավ իրեն սահմանված երկիրը, այդ ամիսը համարվեց ամիսների և տարվա սկիզբ: Ահա այսպես հրեաների տարվա սկիզբը եղավ նիսան ամիսը, հռոմեացիներինը՝ հունվարը, հայերինը՝ նավասարդը և այլն:

Սակայն քրիստոնեությունից հետո եկեղեցական Հայրերը որոշեցին նոր տարվա սկիզբը տոնել հունվարին, որը ձմռանն էր, և ըստ քրիստոնեական ուսուցումների՝ դրա մեջ կարելի էր հատուկ խորհուրդ տեսնել: Սակայն մինչ դրա բացատրությանն անցնելը, նախ տեսնենք, թե որտեղից է առաջացել հունվար ամսվա անունը: Հեթանոսության շրջանում հռոմեացիները մի աստված ունեին Յանուս անունով, որը երկու դեմք ուներ, մեկը նայում էր դեպի ետ, իսկ մյուսը նայում էր դեպի առաջ: Սա խորհրդանշում էր անցյալը և ապագան, անցնող և գալիք տարիները: Եվ ահա հենց սրա անունով էլ կոչվել է այդ ամիսը: Ձմռանը Նոր տարին նշում են հիմնականում քրիստոնյաները, և սրա խորհուրդը հետևյալն է: Ձմռանն ամեն ինչ մեռնում է, և դա է ցույց տալիս նաև այդ անվան նշանակությունը՝ ձմեռ կամ ձյունամեռ, այսինքն՝ ձյունից ամեն ինչ մեռնում է՝ բույսերը չորանում են, ծառերը մերկանում, ջրերը սառչելով պաղում, և երկիրը դադարում է ծննդից: Նույնպես և մեղքով մեռած հոգիները պաղում են Աստծո սիրուց: Եվ այս տեսանկյունով տարվա սկիզբը քրիստոնյա Հայրերը ձմռանը դրեցին, որպեսզի մենք մեր մեղքերի զազիր գործերը հիշելով՝ զղջանք մեր հոգում: Ձմեռը նաև մեզ հուշում է մեր ելքը այս կյանքից, սակայն քանի որ այն իր մեջ նաև ապագա հարության խորհուրդն ունի, ապա մեզ նաև հիշեցնում է հավիտենական կյանքի մասին: Իսկ ինչու՞ է այդ մեկամյա ժամանակամիջոցը կոչվում տարի: Տարի է կոչվում, որովհետև տարավ մեր կյանքի մի մասը, և ժամանակը տարավ ու տանում է ամեն բան, և մեզ ոչինչ չի մնալու: Հետևաբար, չպետք է հոգանք միայն անցողիկ կյանքի, նյութական իրերի համար, այլև հոգևորի և հավիտենականի համար:

Ադամ քահանա Մակարյան. Քրիստոնեության իսկությունը (գիտելիքներ հավատացյալներին)

St Yeghiche Armenian Church Parish
Registered Charity No 1173403
13b Cranley Gardens, Kensington London SW7 3BB
t.+44 20 7373 8133 e. info@styeghiche.org.uk w. www.styeghiche.org.uk

New Year and Christmas
Church Service Timetable

Christmas Day
Sunday, 25th December 2022

10:00 Divine Liturgy And Blessing of Sub-Deacons and Acolytes And Granting of Orarion. Սուրբ Պատարագ եւ Դպրական կիսասարկաւագական Աստիճանի Ծնորհում եւ Ուրարի Տուչութիւն.

New Year / Նոր տարի
Sunday, 1st January 2023

11:00 Divine Liturgy and blessing of Pomegranates
Սբ. Պատարագ, եւ Նռնօրհնէք

Jerakalouys, Christmas Eve *Prayers* / **ՃՐԱԳԱԼՈՅՑ ՍԲ.ԾՆՆԴԵԱՆ**
Thursday, 5th January 2023

16:00 Scripture readings
17:00 Christmas Eve Eucharist and Holy Communion
18:55 Blessing of home.
Սբ. Ծննդեան Ճրագալոյցի
Սբ. Պատարագ Եւ տՆօրհնէք

Theophany and Epiphany / ՍԲ. ԾՆՈՒՆԴ ԵՒ ԱՍՏՈՒԱԾՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ
Friday, 6th January 2023

11:00 Episcopal Divine Liturgy
12:45 Blessing of the Water.
Սբ. Պատարագ եւ Ջրօրհնէք
(Պատարագիչ՝ Յովակիմ Սրբ.),

Requiem Service in Cemeteries / Մեռելոց. Հոգեհանգիստ ի գերեզմանատունս
Saturday, 7th January 2023

11:00 – 12:30 Rev Fr Nshan will be available at Gunnersbury Cemetery to conduct individual prayers. If you require blessing at any other cemetery, please contact us to arrange Clergy visit.

All faithful are invited and encouraged to join us with their prayers.
For enquiries please contact any member of the St Yeghiche Armenian Church Parish Council, manning the desk at the church entrance or email info@styeghiche.org.uk

May the Joy and Peace of Christmas be with you now and throughout the coming year

Parking Permits for Friday 6th January 2023

Dear St Yeghiche Armenian Church Parishioners and Community Members

We are pleased to inform you that we have secured limited number of parking permits for Friday 6th January 2023 (Christmas Day), which will be issued on 1st come 1st served basis.

The permits which are valid between 10:00am and 2:30pm, can be obtained , on the day, from members of the Parish Council at the church entrance desk.

Details of where to park is written overleaf. *Thank you.*

3: This week's message from our Priest in Charge

Մեկնութիւն եւ հոգեւոր պատգամ Աւետարանի այս օրուայ ընթերցուածից.

«Հին անցաւ, եւ հիմա ամէն ինչ նոր եղաւ…»:

Աստուածասէր եղբայրներ եւ քոյրեր, Սուրբ Եղիշէ Հայոց եկեղեցու համայնքի նուիրեալ զաւակներ,

Աստծոյ շնորհով Տարեմուտի եւ Նոր տարուայ բարի օրեր ամէնքիդ :
Ամանորին, կէսգիշերի զանգերից սկսած, բոլորն իրար գեղեցիկ մաղթանքներով երազանքների կատարում կցանկան, ինչպէս ամէն տարի: Մենք էլ, Սուրբ Եղիշէի ծուխի անդամների եւ խորհուրդի անունից մեր բարի աղօթական ցանկութիւններն ենք բերում ձեզ եւ ձեր ընտանեաց անդամներին:

Կարեւոր է, սակայն, թէ ինչ ենք մաղթում իրար: Խաղաղութի՞ն, յաջողութի՞ն, բարօրութի՞ւն, ուրախութի՞ւն… Ամէն տարի նոյն բաները կարող ենք ցանկալ իրար, բայց այս ամէնը իսկապէս կ՛ունենայ միայն այն անձը, ընտանիքը, ժողովուրդը, որ խաղաղութեան Իշխանին ընդառաջ կ՛երթայ, յաջողութիւն տուող Աստծուն կ՛աղօթի, առաքինի եւ բարոյական աշխատանքով կ՛շենացնի իր միջավայրը, Քրիստոսով Աստծոյ եւ մարդկանց հետ հաշտութեան ուրախութիւնը կ՛ունենայ:

Նոր Տարին «նոր» լինելու, նորոգուելու ձգտում է բերում ամէնքի մէջ: Սբ. Շնորհալի հայրապետը յիշեցնում է, որ Քրիստոս է ***«Նորոգող տիեզերաց որ զգեցուցեր մեզ յոյս փառաց …»***, երկնային Ուսուցիչն է մեր եւ ողջ մարդկութեան Նորոգողը: Առանց երկնքից երկիր եկած աստուածային այս Բարենորոգչի, ոչ մի հին մարդ, միտք, կեանք, միջավայր չի նորոգուի:

Աստուած կարող է մեր մաղթածները տալ մեզ եւ մեր սիրելիներին, եթէ մենք մեր սրտերը Աստծուն տանք, մեր մէջ Քրիստոս ունենանք, մենք էլ Իր մէջ լինենք: ***«Իսկ եթէ մէկը Քրիստոսի մէջ է, նա նոր արարած է. որովհետեւ հին անցաւ, եւ հիմա ամէն ինչ նոր եղաւ: Եւ ամէն ինչ Աստծուց է, որ հաշտեցրեց մեզ իր հետ, Քրիստոսի միջոցով»*** (Բ. Կորնթ. 5:17-18):

Սիրելինե՛ր, Քրիստոսի մէջ լինելն Աւետարան կարդալու, անկեղծ դարձի, հաւատքով ապրելու, մկրտուելու, համայնքային կեանքի մէջ գործուն կերպով բարի ներկայութիւն ունենալու միջոցով է: Քրիստոսի մէջ ենք, երբ Իր մարմնի՝ Եկեղեցու մէջ ենք ոչ հպանցիկ, տարուայ մէջ երկուանգամեայ այցելութեամբ, այլ երբ միմեանց կարիքին եւ ուրախութանը հաղորդ ենք եկեղեցու մէջ իրար ճանաչելով, իրար սիրելով, իրար թիկունք եւ աջակից լինելով, ընտանեկան մտերմութիւններով եւ եկեղեցի մշտական այցելութեամբ Աստծոյ սէրը կենդանի ապրելով:

Նոր Տարուն Աստուած նորոգութեան ոգի թող տայ ամէնքիս: Ամէն օր Աւետարանի խօսքով զինուենք, աղօթքով երկիրը երկինք բարձրացնենք, եղբայրասիրութեամբ մենք-ը զօրացնենք, Քրիստոսին մեր կեանքի կենտրոնում պահենք: Այն ժամանակ մեր մաղթանքները Աստծով պիտի իրագործուեն եւ Նոր Տարին պիտի դառնայ վերածնունդի սկիզբ մեր անձի, մեր ընտանիքի, մեր Հայրենիքի համար:

Թող Աստուած օրհնի ձեր ընտանեկան հարկերը, ձեր կենդանի եւ ապրուն քրիստոնէական կենցաղով զօրացնի մեր եկեղեցին եւ հայրենին այժմ եւ յաւիտեանս: ամէն:

Շնորհաւոր Նոր Տարի:

Սբ Եղիշէի Հոգեւոր Հովիւ Տէր Նշան Քահանայ Ալավերդեան

Announcement

Organist / Keyboard Player Required

St Yeghiche Armenian Church Parish is looking to engage an enthusiastic Organist / Keyboard player to assist and enhance our Sunday Divine Liturgy and its glorification of our Lord.

The position entails playing on Sunday's Divine Liturgy, and other religious events throughout the Year.

Fees by negotiation – Immediate start

If interested please contact
Choirmaster Mr Aris Nadirian or
Parish Council Chairman Mr Viken Haladjian
by calling 020 73738133 or by emailing to
info@styeghiche.org.uk

The Church organ is the second largest in the country, lavishly carved and decorated with prefigures of Gothic architecture. It is noteworthy that Sir Arthur Seymour Sullivan, illustrious English composer was the first organist at St Yeghiche Armenian Church (previously known as St. Peter's Church) who played the first version of the existing organ from 1867 to 1871. .

Join St. Yeghiche Armenian Church Choir

Join us in the celebration of the Divine Liturgy, Badarak, at St. Yeghiche Armenian Church in Cranley Gardens. Deepen your faith and discover your talent as a choir member by learning the Armenian hymns and rituals. No prior experience or knowledge is needed. The choirmaster, Aris Nadirian, will help you build your confidence and proficiency in singing the liturgy.

We look forward to welcoming everyone to our choir. Your presence will expand and enrich our choir.
For further details, please contact: services@styeghiche.org.uk

Congratulations

St Yeghiche Armenian Church Council and its Parish Members would like to congratulate the following Alter Servers who have successfully passed their exam and were blessed by HG Bishop Hovakim Manukyan on Sunday 25th December 2022 with the Sacrament of Conferring to the Four Degrees for the Rank of Clergy and Sub Deacon according to the Canons of the Armenian Apostolic Orthodox Church.

THE SACRAMENT OF CONFERRING THE FOUR DEGREES

Վաչէ Հիսարլեան / Vatche Hisarlyan, **Հայկ Եղիկյան** / Hayk Yeghikyan, **Գարեգին Մելքոնյան** / Garegin Melkonyan, **Նարեկ Մելքոնյան** / Narek Melkonyan, **Վարդան Վարդանյան** / Vardan Vardanyan, **Անդրանիկ Գէորգեան** / Antranig Kevorkian, **Արտեմ Կարապետյան** / Artyom Karapetyan.

THE RANK OF CLERGY THE SUB-DEACON

Վահան դպիր Գրիգորեան / Vahan Krikorian, **Վաչէ Հիսարլեան** / Vatche Hisarlyan

It is a great news for our church, to be blessed with dedicated young individuals, who will serve our Lord at its Altar. Thank You

ՃՐԱԳԱԼՈՒՅՑ Ս. ԾՆՆԴՅԱՆ ԵՎ ԱՍՏՎԱԾԱՀԱՅՏՆՈՒԹՅԱՆ

Ճրագալույցի խորհուրդը հույժ գեղեցիկ է: Այն նախատոնակն է ու կարապետը հետագա ութ օրերի պաշտամունքների, որով և լինում է ինը տոնական օր: Որովհետև սա նշանակն է այն հավիտենականության, որը կար մինչև աշխարհի լինելը:

Աղամի՝ Դրախտից դուրս ելնելուց շուրջ հինգ հազար տարի անց Աստված երևաց մարմնավորված, այդ պատճառով այսօր նախատոնակ է, որը Եկեղեցին սկսում է գիշերը՝ Կույս Մարիամի ավետյաց երգով: Եվ գիշերն ենք սկսում, որն օրինակն է Տիրոջ վերջին գալստյան, որովհետև ասված է, որ այն գիշերն է լինելու: Նաև ըստ մարգարեության՝ լույս ծագեց կռապաշտության և անգիտության խավարում, որի պատճառով էլ այսուհետև խավարը տեղի է տալիս և բազմանում լույսը՝ ըստ Եսայի մարգարեի խոսքի. «**Թագավորները գալու են դեպի Քո լույսը, հեթանոսները՝ դեպի Քո լույսի փայլը**» (Եսայի Կ 3): Նաև Մաղաքիան է ասում. «**Արդարության Արեգակը պիտի ծագի**» (Մաղաք. Դ 2): Զաքարիան Արևածագ է անվանում Նրան, իսկ Դավիթն ասում է. «**Լո՛ւյս տուր, Տե՛ր, իմ աչքերին**» (Սաղմ. ԺԲ 4): Եվ աստղի լույսով մոգերն առաջնորդվեցին՝ գալով դեպի ծագած Լույսը՝ ըստ այն խոսքի, թե՝ «**Խավարի մեջ նստած ժողովուրդը մեծ լույս տեսավ. և լույս ծագեց նրանց վրա, որ նստում էին մահվան երկրի և ստվերների մեջ**» (Մատթ. Դ 16):

Այս իմանալի և անճառելի Լույսի ծագման համար այսօր մենք վառում ենք լապտերներն ու կանթեղները և անվանում այս օրը մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի ծննդյան և Աստվածհայտնության ճրագալույցը, որը խորհրդանշում է լույսի աղոտ ծագումը: Ըստ Հովհաննես ավետարանչի՝ Հովհաննես Մկրտիչը ճրագ է կոչվում, իսկ աղոտ ծագումը մարգարեներն են, ովքեր եղան մինչև Հովհաննեսը, որոնցով աղոտ կերպով ծագում էին Տիրոջ գալստյան հանգամանքները, որովհետև Տերը ոչինչ չի անում առանց Իր ծառաներին հայտնելու: Եվ այս օրը կարապետն ու նախատոնակն է հաջորդ՝ գալիք օրվա, երբ ծագելու է մեծ Լույսը, ինչպես որ թագավորի գալուստից առաջ նրա սիրելիները խնդությամբ պատրաստություն են տեսնում և ջահերով ընդառաջ ելնում: ***Արամ Դիլանյան***

Ս. ՍՏԵՓԱՆՈՍ՝ ՆԱԽԱՎԿԱ ԵՎ ԱՌԱՋԻՆ ՄԱՐՏԻՐՈՍ



Ստեփանոսը մեկն էր այն **7** այրերից, որոնք Երուսաղեմի Եկեղեցու կողմից սարկավագ ընտրվեցին ժողովրդին սպասավորելու համար: Այս երիտասարդը լցված էր Սուրբ Հոգու շնորհներով ու զորությամբ եւ Հիսուսի մասին վկայում էր ոչ միայն խոսքով, այլեւ զարմանալի գործերով ու նշաններով: Նրա քարոզներն ու անվեհեր կեցվածքը, իմաստությունը եւ հաստատակամությունը գրգռում էին փարիսեցիներին ու դպիրներին, եւ նրանք Ստեփանոսին, որպես հայհոյիչի եւ հերձվածողի, դատապարտեցին մահվան:

Երբ նա վկայում էր ատյանում, որ Հիսուսը մարգարեների միջոցով կանխահայտնված Մեսիան է, բոլոր ներկաները տեսան, որ Սուրբ Հոգու զորությամբ խոսող Ստեփանոսի դեմքը փայլում է հրեշտակի դեմքի պես: Եվ մինչ նա խոսում էր, նայեց երկինք ու տեսավ Աստծո փառքը եւ Հիսուսին ու ասաց. «**Ահա տեսնում եմ երկինքը բացված եւ Մարդու Որդուն, որ կանգնած է Աստծո աջ կողմը**» (Գործ. 7.55): Այս լսելով՝ հրեաները փակեցին իրենց ականջները, մոլեգնելով նետվեցին նրա վրա եւ քաղաքից դուրս հանելով՝ քարկոծելով սպանեցին:

Ստեփանոսը դարձավ Եկեղեցու առաջին վկան եւ նահատակը: Նրա նահատակության վայրը Երուսաղեմի արեւելյան դարպասն էր, որը հետագայում կոչվեց Ստեփանոսի դուռ:

4: Հոգեհանգիստ - Memorial Service

Repose of the soul service at St Yeghiche Armenian Church is requested:

There is no memorial service today.

May the Lord rest the souls of the deceased members of our community in peace and console their loved ones with the comforting power of His Holy Spirit.

Please Pray For Our Sick: Please notify the Pastor whenever you know of anyone who is sick, whether at home or in the hospital. Let us pray for one another

Rev Fr Nshan Alaverdyan is available to visit parishioners in the hospital, nursing homes, or home visitations. He is also available to conduct Home Blessings, administering Holy Communion, consultations and other sacramental needs. Please call the church office at 020 7373 8133 or Fr Nshan at 07548 777 147.

Ձեր ամեն տեսակի հոգեւոր կարիքներուն եւ Խորհրդակատարութիւններուն՝ Տնօրհնէքի, հիւանդի այցելութեան, Սբ Հաղորդութեան ստանալու եւ այլ խնդրանքներուն համար դիմեցէք Եկեղեցի 020 7373 8133, կամ ուղղակի հեռաձայնեցէք **Սբ Եղիշէի Հոգեւոր Հովիւ Տէր Նշան Քահանայ Ալավերդեանի** 07548 777 147:

HOKEHANKIST AND IN LIEU OF FLOWERS

Friends and family of the deceased can make donations, in memory of their loved one, to St. Yeghiche Armenian Church General Operating Fund for prayers or in lieu of sending flowers.

ENQUIRIES:

For ecclesiastical/parish matters including requests for Christenings, Home Blessing (Dnorhnek), Donations in Lieu of Flowers, arrangements for Marriages and other church administrative matters please contact Mr Viken Haladjian, phone: **07970 146 280** or by emailing info@styeghiche.org.uk
Alternatively please approach a member of the Parish Council at church every Sunday after Badarak.

Requiem Service (Hokehankisd)
For Requiem Service (Hokehankisd), please call the administration number at **07970 146280**, or e-mail us your request to info@styeghiche.org.uk by Thursday, in order to include the name(s) of your beloved one(s) in the Sunday bulletin. There is no set monetary amount for requesting Hokehankisd; any amount donated is appropriate and appreciated. **Please remember our Church in your prayers.** *Your kind donations are gratefully*

ANNOUNCEMENT:

St Yeghiche Armenian Church Parish Council would like to invite members of the Armenian community to become registered members and take part in Parish activities. Become a dues paying member and let your voice be heard, be eligible to vote and be elected to one of Parish offices. Please contact a member of the Parish Council at the side entrance desk of the Church or visit our website www.styeghiche.org.uk

We welcomes your donations for prayers and support towards church annual expenses. **May the Lord bless you and your family, keep you away from all harm and fulfil all you prayers and dreams.**

-You may send in your donations as follows: Please post your cheques to: St Yeghiche Armenian Church Parish, *13b Cranley Gardens, Kensington, London, SW7 3BB*. Please make your cheques payable to: ***"St Yeghiche Armenian Church"***.

-You can also pay by bank transfer to St Yeghiche Armenian Church Parish Ltd Account at: HSBC, Acc.no: 42674432, Sort code: 40-02-26, IBAN: GB13HBUK40022642674432, BIC: HBUKGB4106F

-Alternatively you may use our QR Code which will enable you to make donations directly to the Church PayPal account. Please scan this QR Code to make your electronic weekly, monthly or periodical contributions. *Thank you.* **St Yeghiche Armenian Church Parish Council**

PayPal

Scan. Pay. Go.

St Yeghiche Armenian Church is a Registered Charity, Reg No 1173403.
Please complete a Gift Aid Form with your donation. Forms are available from Parish Council.